ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի օգոստոսի 30-ից սեպտեմբերի 19-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ՝**

Մերի Աղաջանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 2023թ. օգոստոսի 25-ի N 1699-Ա հրամանի համաձայն 2023 թվականի օգոստոսի 30-ից սեպտեմբերի 19-ը ներառյալ գործուղվել եմ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ՝**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝**

«Կանաչ, շրջանաձև տնտեսություն և կայուն զարգացում» խորագրով դասընթացին մասնակցություն

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Առաջին փուլը տեղի է ունեցել Չինաստանի Հանչժոու քաղաքում, որտեղ բանախոսությամբ հանդես եկան մի շարք դիվանագետներ և գիտական գործիչներ, հետազոտողներ, դասախոսներ, ովքեր համապարփակ ներկայացրեցին Չինաստանի

քաղաքական և տնտեսական ընդհանուր իրավիճակը, երկրի գյուղական բնակավայրերի էլեկտրիֆիկացման ծրագիրը, Չինաստանի զարգացման ուղին կայուն զարգացման հասնելու ճանապարհին: Բանախոսները հատուկ շեշտադրում էին անում Չինաստանի քաղաքականությանը՝ ուղղված էկոլոգիապես մաքուր և ցածր-ածխածնային արտանետումներով, ինչպես նաև այլընտրանքային էներգիայի և «մաքուր զարգացման մեխանիզմների» օգտագործմամբ շրջանաձև տնտեսության անցմանը:

Երկրորդ փուլը անցկացվել է Չինաստանի մայրաքաղաք Պեկինում, որտեղ մասնակցել եմ 18-րդ Համաշխարհային Ջրային Կոնգրեսին՝ կազմակերպված Չինաստանի Ջրային ռեսուրսների նախարարության և Ջրային ռեսուրսների համաշխարհային կազմակերպության կողմից:

Կոնգրեսին մասնակցել են շուրջ 1000 բանախոսներ, կազմակերպիչներ, ջրային ինստիտուտների և մարմինների ազգային ներկայացուցիչներ, կամավորներ Չինաստանի տարբեր համալսարաններից:

Դասերն անցկացվել են Հանչժոուի տարածաշրջանային կենտրոնում, որը մասնագիտացված է փոքր ՀԷԿ-երի կառուցմամբ, մոնիթորինգային և ստանդարտացման գործընթացներով:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ.

Սեմինարին մասնակցում էին Հայաստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Կոստա Ռիկայի, Չեխիայի, Հորդանանի, Լաոսի, Մարոկկոյի, Նեպալի, Պակիստանի, Պերույի, Տրինիդադ և Տոբագոյի, Վենեսուելայի ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ հրավիրված էին 35 ներկայացուցիչ:

«Համաշխարհային Ջրային Կոնգրես 2023»-ին ելույթով հանդես եկան Չինաստանի Ջրային ռեսուրսների նախարար Լի Գուոյինգը, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գլխավոր քարտուղարը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

Դասընթացի ընթացքում մասնակցել եմ դասախոսությունների, ուսուցողական այցերի, պլանային քննարկումների և միջոցառումների, որոնց միջոցով ներկայացվել է Չինաստանի փորձը տնտեսության տարբեր ոլորտներում, մասնավորապես կայուն,

անթափոն գործընթացների, էկոլոգիապես մաքուր, աշխարհագրական դիրքի, ջրային ռեսուրսներով ամենահարուստ երկիր լինելով մի շարք հիմնախնդիրների հաղթահարման ուղին:

Ավարտելով «Կանաչ, շրջանաձև տնտեսություն և կայուն զարգացում» խորագրով դասընթացը՝ ելույթով և սահիկաշարով հանդես եկա՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունը, վերջինիս կայուն զարգացման ուղին և հիմնախնդիրները: Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվել են հավաստագրեր:

Մերի Աղաջանյան
25.09.2023թ.